# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 28 հուլիսի 2006թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի I-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Զ. Ղուկասյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Սոֆիկ Գասպարյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Սոֆիկ Գասպարյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Ս. Գասպարյանը միջնորդել է իրեն ազատել պետտուրքի վճարումից, որը բավարարման ենթակա է, քանի որ հայրենիքի պաշտպանության մարտերում զոհվածի մայր է, կենսաթոշակառու եւ եկամտի այլ աղբյուր չունի:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի I-ին կազմը

ՈՐՈՇԵՑ

Սոֆիկ Գասպարյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Ս. Գասպարյանին ազատել պետտուրքի վճարումից:

Նախագահող՝

Անդամներ՝